ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՖ-ՆԳ-2022/217

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հովակիմյանի (լիազորագիր՝ տրված 01.06.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9985-2022 գրությամբ «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.05.2022թ. թիվ 02/16.4/5530-2022 գրության հիման վրա, 31.05.2022թ.

թիվ 26/26-1/9985-2022 գրությամբ նախաձեռնել է «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն[1] 2022թ. մարտի 18-ին հայտարարել է ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի և ՀՀ Արագածոտնի մարզի «Ալագյազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման բաց մրցույթ[2]:

2. «Էնջինիրինգ» փակ բաժնետիրական ընկերությունը[3] ներկայացրել է Մրցույթին մասնակցելու հայտ:

3.1 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 16-ի նիստի N 2-1 արձանագրության 1.1 կետի «գ» ենթակետում նշվել է՝ «Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը՝ «Էնջինիրինգ» ՓԲԸ»:

3.2 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 16-ի N 2-1 արձանագրության 1.3 կետում նշվել է՝ «[...] մասնակցի կողմից հայտի ապահովման բանկային երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու նպատակով՝ հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և հաջորդ նիստ հրավիրել ոչ ուշ, քան 2022 թվականի մայիսի 17-ին՝ ժամը 17:00-ին»:

4.1 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 17-ի N 2-2 արձանագրության 1.1 կետում նշվել է՝ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից 2022 թվականի մայիսի 17-ին՝ ժամը 17:00-ի դրությամբ ներկայացվել է հայտ ապահովման (նաև երկարաձգման) բանկային երաշխիքի բնօրինակը:

4.2 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 17-ի N 2-2 արձանագրության 1.2 կետում նշվել է՝ «Ներկայացված հայտն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշում

[1] Այսուհետ՝ Պատվիրատու:
[2] Այսուհետ՝ Մրցույթ:
[3] Այսուհետ՝ Մասնակից:

է կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան 2022 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 15:00-ին»:

5.1 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 24-ի N 2-3 արձանագրության 1.1 կետում նշվել է՝

Ծավալաթերթ-նախահաշվի վերաբերյալ՝ ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը.

Սարքերի և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)՝

[…]

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ըստ մասնակցի կողմից ներկայացված CPSTEN50Hz տեխնիկական անձնագրում առկա հիդրավլիկ կորի՝ հրավերով պահանջվող H=15 մ ճնշման դեպքում նշված մոդելը չի ապահովում Q=5 մ3/ժ ջրաքանակ, այլ ապահովում է 4 մ3/ժ (65լ/ր) ջրաքանակ.

[…]

2-րդ տողի 7-րդ՝ «Արտադրող ընկերության անվանումը» սյունակում անհրաժեշտ է ավելացնել Systemair բառը, քանի որ ներկայացված 3800 EL-R տեխնիկական անձնագրում նշված է, որ ROTOVEX 3800 EL-R մոդելը հանդիսանում է Sysyemair արտադրողի մոդել:

5.2 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 24-ի N 2-3 արձանագրության 1.2 կետում նշվել է՝ «[…] ծանուցել «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 25.05.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները […]»:

6. Մասնակիցը նախատեսված ժամկետում կատարել է համապատասխան շտկումները և սահմանված կարգով ներկայացրել գնահատող հանձնաժողովին:

7.1 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության[4] 1.2 կետում նշվել է՝

Սարքերի և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)՝

[…]

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին […]:

[4] Կից ներկայացվում է N 2-4 արձանագրության արտապատճենը:

7.2 Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության 2.1 կետում նշվել է՝ «Կարգի 42-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել»:

8. Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության մեջ բացակայում է համապատասխան իրավական հիմքը (արձանագրության մեջ պետք է հստակ նշվեր Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և (կամ) «բ» և (կամ) «գ» ենթակետերից մեկի կամ մի քանիսի առկայությունը)՝ կապված այն արարքի հետ, որոնց հիման վրա միայն Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

9.1 Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ 2022թ. մայիսի 30-ին թիվ 02/16.4/5530-2022 գրությամբ Մասնակցի տվյալներն ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն5:

9.2 Պատվիրատուի՝ 2022թ. մայիսի 30-ի թիվ 02/16.4/5530-2022 գրության մեջ դարձյալ բացակայում է համապատասխան իրավական հիմքը (գրության մեջ պետք է հստակ նշվեր Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և (կամ) «բ» և (կամ) «գ» ենթակետերից մեկի կամ մի քանիսի առկայությունը)՝ կապված այն արարքի հետ, որոնց առկայության դեպքում միայն Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

10. Լիազորված մարմինը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգը:

11. Բողոքներ քննող անձը 2022թ. մայիսի 31-ին Մասնակցին ծանուցել է Լիազորված մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգի մասին: Ծանուցման մեջ նշվել է՝ «[...] առաջարկում եմ հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնել Ձեր գրավոր դիրքորոշումը»:

ՄԱՍ Բ.

Վեճի առարկան

Սույն գործով վեճի առարկան հանգում է հետևյալին՝

- արդյո՞ք Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության և 2022թ. մայիսի 30-ի թիվ 02/16.4/5530-2022 գրության մեջ բացակայում է համապատասխան իրավական հիմքը (արձանագրության/գրության մեջ պետք է հստակ նշվեր Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և (կամ) «բ» և (կամ) «գ» ենթակետերից մեկի կամ մի քանիսի առկայությունը)՝ կապված այն արարքի հետ, որոնց առկայության դեպքում նոր միայն Բողոքներ քննող անձն իրավունք ունի ըստ էության քննել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու կամ չներառելու հարցը:

ՄԱՍ Գ.

Պարզաբանման ենթակա հարցեր և մեթոդաբանություն

---

1. Սույն գործով վեճի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

հարց 1՝ իրավահարաբերության ծագման պահին առկա իրավակարգավորման պայմաններում ո՞ր դեպքում Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

հարց 2՝ իրավահարաբերության ծագման պահին առկա իրավակարգավորման պայմաններում Բողոքներ քննող անձն ի՞նչ սահմաններում պետք է քննի Պատվիրատուի գրության հիման վրա Լիազորված մարմնի՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը.

2. Վերը նշված հարցերի պատասխանները ստանալու նպատակով անհրաժեշտ է՝

(1) հարց 1-ի մասով՝ վերլուծել Օրենքի և Կարգ 1-ի համապատասխան իրավակարգավորումները.

(2) հարց 2-ի մասով՝ համակարգային և նպատակաբանական վերլուծության ենթարկել Օրենքի համապատասխան դրույթները՝ փոխկապակցված Կարգի 1-ի և ՀՀ ֆինանսների

---

[5] Այսուհետ՝ Լիազորված մարմին:

նախարարի՝ 2018թ. դեկտեմբերի 6-ի «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» N 600-Ն հրամանի հավելվածով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի[6] անհրաժեշտ իրավակարգավորումների հետ.

ՄԱՍ Դ.

Իրավական հիմքեր և հիմնավորումներ

1.1 Մեկնաբանություն.

Առաջին՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «[...] Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից»:

Սույն կարգավորումից՝ փոխկապակցված ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի հետ, բխում է, որ օրենսդիրը, մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում ներառելու հիմքերը նախատեսելիս, առաջնորդվել է այդ հիմքերը սպառիչ թվարկելու օրենսդրական տեխնիկայի կանոնով: Սա նշանակում է, որ առհասարակն մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում՝ բացառապես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված հիմքերից մեկի առկայության դեպքում: Այլ խոսքով՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը չեն կարող ենթարկվել տարածական մեկնաբանման կամ այդ հիմքերը փնտրել այլ իրավական ակտի շրջանակներում:

Երկրորդ՝ ասվածի համատեքստում հաջորդ կարևոր հարցը, որին պետք է անդրադառնալ, այն է, թե ինչ կարգով է մասնակիցը ներառվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

---

[6] Այսուհետ՝ նաև Կարգ 2:

Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն՝ «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ»:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «[…] լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ»:

Սույն կարգավորումներից՝ փոխկապակցված ՀՀ Սահմանադրության 79-րդ և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հետ, բխում է՝

ա) յուրաքանչյուր դեպքում պատվիրատուն պարտավոր է գրությունը Լիազորված մարմնին ուղարկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կոնկրետ հիմքերից մեկի կամ մի քանիսի հստակ նշումով՝ նկարագրելով կոնկրետ արարքը.

բ) յուրաքանչյուր դեպքում նախքան մասնակցին համապատասխան ցուցակում ներառելը, Բողոքներ քննող անձի մոտ պետք է քննարկման առարկա դառնա հենց պատվիրատուի գրության մեջ նշված և մասնակցին վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը՝ կապված համապատասխան արարքի հետ կամ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայությունը.

գ) Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է հնարավորություն ունենա իր դիրքորոշումը հայտնել պատվիրատուի կողմից Լիազորված մարմնին ուղարկված գրության մեջ նշված և իրեն վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի և դրանց հետ կապված արարքի վերաբերյալ.

Ստացվում է՝ եթե պատվիրատուն Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն՝ գրությունը Լիազորված մարմնին ուղարկում է՝ առանց Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կոնկրետ հիմքերից մեկի կամ մի քանիսի հստակ նշումով՝ նշանակում է՝ առնվազն այս մասով բացակայում է Լիազորված մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքը: Խնդիրն այն է, որ այդ

դեպքում մասնակցի համար պարզ չէ, թե ինչի վերաբերյալ դիրքորոշում հայտնի: Մասնավորապես՝ դիրքորոշում հայտնի, որ այդպիսի հիմք գործում առկա չէ, թե դիրքորոշում հայտնի, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով նկարագրված արարք (գործողություն/անգործություն) չի կատարել և դա այն դեպքում, երբ ինքին պարզ չէ, թե որ հիմքի մասին է խոսքը գնում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, նույն հոդվածի 2-րդ մասով և Կարգ 1-ի 45-րդ կետով նախատեսված կարգավորումների իմաստն ինքնին բխում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքից: Այլ խոսքով՝ մասնակցի համար պետք է բավարար չափով որոշակի լինեն հիմքերն ու ծավալները, որպեսզի հնարավորություն ունենա իրացնել գնումների մասին օրենսդրության նախատեսված իր իրավունքների և օրինակ շահերի պաշտպանությունը:

Այս առումով հարկ ենք համարում Ձեր ուշադրությունը հրավիրել ևս մեկ կարևոր հարցի վրա, որի էությունը հետևյալն է՝ արդյո՞ք պատվիրատուն պարտավոր չէ գնման ընթացակարգի արձանագրության մեջ հստակ նշել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը, եթե այդպիսիք առկա են, որը հետագայում պատվիրատուին հնարավորություն կտա Կարգ 1-ի 45-րդ կետի հիման վրա համապատասխան գրությամբ՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիքմերից որևէ մեկով մասնակցի տվյալներն ուղարկել Լիազորված մարմնին:

Օրենքի և Կարգ 1-ի համապատասխան իրավադրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրն այդպիսի պահանջ, օրինակ՝ ուղղակի նախատեսել է հայտերի մերժման դեպքում: Մասնավորապես՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և Կարգ 1-ի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ արձանագրության մեջ պետք է մանրամասն նկարագրվեն հայտերի մերժման հիմքերը:

Առաջին հայացքից Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության վերաբերյալ արձանագրության մեջ որևէ նշում կատարելու պահանջ չի նախատեսում: Սակայն միայն առաջին հայացքից: Երբ խնդիրը դիտարկում ենք Օրենքի կարգավորումների նպատակաբանության տեսանկյունից՝ փոխկապակցված ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի հետ, պարզ է դառնում, որ պատվիրատուն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի և Կարգ 1-ի 45-րդ կետի ուժով պարտավոր է արձանագրության մեջ կոնկրետ նկարագրել ոչ միայն արարքը, այլ նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից մեկի առ-

կայությունը, որի հիման վրա հետագայում իրավունք կունենա մասնակցի տվյալներն ուղարկել լիազորված մարմնին: Ասվածը բխում է նաև Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 8-րդ կետով նախատեսված կարգավորումից, փոխկապակցված 12-րդ կետի հետ, ըստ որի՝ արձանագրությունը պարունակում է այլ անհրաժեշտ տեղեկություններ: Իսկ այս դեպքում այդպիսի անհրաժեշտ տեղեկություն է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից մեկի առկայությունը:

Այս կերպ կարգավորման իմաստն հետևյալն է: Պատվիրատուն կարող է Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն մասնակցի տվյալներն ուղարկել Լիազորված մարմնին միայն այն դեպքում, երբ նրա մոտ ծագած լինի մասնակցի տվյալներն Լիազորված մարմին ուղարկելու սուբյեկտիվ իրավունք: Իսկ այդպիսի սուբյեկտիվ իրավունք կարող է ծագել միայն արձանագրության մեջ պատվիրատուի կողմից մասնակցին վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկն արձանագրված լինելու փաստի ուժով:

Հետևաբար, եթե պատվիրատուն արձանագրությունը կազմում է՝ առանց Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կոնկրետ հիմքերից մեկի կամ մի քանիսի հստակ նշումով՝ նշանակում է՝ Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն հետագայում մասնակցի տվյալները Լիազորված մարմնին ուղարկելու սուբյեկտիվ իրավունք պատվիրատուի մոտ չի կարող ծագել, ուստի և Լիազորված մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում չի կարող որևէ խոսք գնալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այժմ վերոգրյալում կատարված իրավական կարգավորումների վերլուծությունների լույսի ներքո առաջարկում ենք անդրադառնալ այն հարցին, թե Բողոքներ քննող անձն ի՞նչ սահմաններում պետք է քննի պատվիրատուի գրության հիման վրա Լիազորված մարմնի՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը, եթե պատվիրատուի արձանագրության և գրության մեջ նշված չէ մասնակցին վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը՝ կապված համապատասխան արարքի հետ:

Ինչպես արդեն նշվեց, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի և Կարգ 1-ի 45-րդ կետի պահանջները հետապնդում են մեկ նպատակ, այն է՝ որպեսզի մասնակիցը հնարավորություն ունենա իր դիրքորոշումը հայտնել պատվիրատուի կողմից Լիազորված մարմնին ուղարկված գրության մեջ նշված և իրեն վերագրվող՝

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի և դրանց հետ կապված արարքի վերաբերյալ: Եթե այդ հիմքն առերևույթ առկա չէ, ապա ապա առնվազն մասնակցի համար պարզ չէ թե իրեն ո՞ր իրավական հիմքով ինչ արարք է վերագրվում: Հետևաբար՝ խոսք չի կարող գնալ մասնակցին համապատասխան ցուցակում ներառելու մասին:

Այս հանգամանքը կարևոր է նաև Բողոքներ քննող անձի համար հետևյալ պատճառաբանությամբ: Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության համար հատուկ կարգ նախատեսված չէ և գործում է ՀՀ ֆինանսների նախարարի՝ 2018թ. դեկտեմբերի 6-ի «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» N 600-Ն հրամանի հավելվածով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգ: Ուստի բարձրացված հարցը պետք է դիտարկել նշված Կարգ 2-ի կարգավորումների շրջանակներում:

Կարգ 2-ի 18-րդ կետի համաձայն՝ «[…] որոշումը՝ 1) օրինական է, եթե այն կայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ. 2) հիմնավորված է, եթե դրանում արտացոլված են այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական ու իրավական հիմքերը. 3) պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ Անձի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները»:

Կարգ 2-ի 20-րդ կետի համաձայն՝ «Բողոքը բավարարելու կամ մերժելու մասին կայացվող որոշման՝ […]

2) նկարագրական մասում նշվում են բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը, առարկան, բողոքի փաստական և իրավական հիմքերը, բողոքը ներկայացրած անձի պահանջը, բողոքարկման գործընթացի կողմերի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր դիրքորոշումները, ապացույցները, փորձաքննություն նշանակված լինելու դեպքում փորձագետի եզրակացությունը, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

3) պատճառաբանական մասում նշվում են բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Անձի եզրահանգումը՝ բողոքով ներկայացված պահանջների, կողմերի ներկայացրած փաստաթղթերի, գրավոր դիրքորոշումների, ապացույցների հիմնավորվածության վերաբերյալ […]»:

Հիշյալ կարգավորումներից բխում բխում է՝

ա) Բողոքներ քննող անձն իրավասու է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված հարցերը, այդ թվում նաև մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննարկել բացառապես գործում առկա փաստական և իրավական հիմքերի շրջանակներում և բացառապես դրանց հիման վրա կատարել եզրահանգումներ.

բ) որոշումը կարող է համարվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ կայացված՝ օրինական, եթե այն քննվել է գործում առկա փաստական և իրավական հիմքերի շրջանակներում, հիմնավորված է, եթե որոշման մեջ արտացոլված են այդ փաստական և իրավական հիմքերը, պատճառաբանված, եթե Բողոքներ քննող անձի եզրահանգումները բխել են գործում առկա փաստական և իրավական հիմքերից:

Հետևաբար, այս համատեքստում է այն հարցն առաջանում, թե արդյո՞ք Բողոքներ քննող անձն կարող է ըստ էության քննել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, եթե պատվիրատուի արձանագրության և գրության մեջ նշված չէ մասնակցին վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը՝ կապված համապատասխան արարքի հետ, որպեսզի մասնակիցը հնարավորություն ունենա այդ հիմքի վերաբերյալ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հայտնել իր դիրքորոշումը:

Եթե գտնվենք հակիճ, ապա կարող ենք արձանագրել, որ Կարգ 2-ի 18-րդ և 20-րդ կետերի համաձայն՝ փոխկապակցված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 2-րդ մասի և Կարգ 1-ի 45-րդ կետի հետ՝ Բողոքներ քննող անձը չի կարող ըստ էության քննել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը (արդյո՞ք մասնակիցն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ արարք կատարել է, թե՝ ոչ), եթե պատվիրատուի արձանագրության և գրության մեջ նշված չէ մասնակցին վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը: Այդ դեպքում Բողոքներ քննող անձը պետք է քննության առարկա դարձնի միայն այն հարցը, որ բացակայել է մասնակցին համապատասխան ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու իրավական հիմքը:

1.2 Մեկնաբանության կիրառելիությունը սույն գործով առկա փաստերի նկատմամբ.

Գնահատող հանձնաժողովի N 2-4 արձանագրության 2.1 կետում նշվել է՝ «Կարգի 42-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել»:

Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության մեջ բացակայել է համապատասխան իրավական հիմքը (արձանագրության մեջ պետք է հստակ նշվեր Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և (կամ) «բ» և (կամ) «գ» ենթակետերից մեկի կամ մի քանիսի առկայությունը)՝ կապված այն արարքի հետ, որոնց հիման վրա միայն Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուն Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն՝ 2022թ. մայիսի 30-ին գրությամբ Մասնակցի տվյալներն ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուի՝ 2022թ. մայիսի 30-ի գրության մեջ բացակայել է համապատասխան իրավական հիմքը (գրության մեջ պետք է հստակ նշվեր Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և (կամ) «բ» և (կամ) «գ» ենթակետերից մեկի կամ մի քանիսի առկայությունը)՝ կապված այն արարքի հետ, որոնց հիման վրա միայն Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սույն գործում առկա փաստերից՝ փոխկապակցված ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 2-րդ մասի, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 12-րդ կետերի, Կարգ 1-ի 45-րդ կետի և Կարգ 2-ի 18-րդ և 20-րդ կետերի հետ, բխում է՝

առաջին՝ Պատվիրատուն N 2-4 արձանագրությունը կազմել է՝ առանց Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կոնկրետ հիմքերից մեկի կամ մի քանիսի հստակ նշումով: Սա նշանակում, որ առնվազն Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն մասնակցի տվյալները Լիազորված մարմնին ուղարկելու սուբյեկտիվ իրավունք պատվիրատուի մոտ այդպես էլ չի ծագել, ուստի և Լիազորված մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում չի կարող որևէ խոսք գնալ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

երկրորդ՝ Պատվիրատուն Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն՝ գրությունը Լիազորված մարմնին ուղարկել է՝ առանց Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կոնկրետ հիմքերից մեկի կամ մի քանիսի հստակ նշումով: Սա նշանակում է, որ առնվազն այս մասով բացակայում է Լիազորված մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքը: Հարցն այն է, որ այս պայմաններում Մասնակցի համար պարզ չէ, թե ինչի վերաբերյալ դիրքորոշում հայտնի: Մասնավորապես՝ դիրքորոշում հայտնի, որ այդպիսի հիմք գործում առկա չէ, թե դիրքորոշում հայտնի, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով նկարագրված արարք (գործողություն/անգործություն) չի կատարել, եթե ինքնին պարզ չէ, թե որ հիմքով է Պատվիրատուն գրությունն ուղարկել Լիազորված մարմնին: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի և Կարգ 1-ի 45-րդ կետի համաձայն՝ փոխկապակցված ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի հետ՝ Մասնակցի համար պետք է բավարար չափով որոշակի լինեն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքն ու ծավալը, որպեսզի հնարավորություն ունենա իրացնել գնումների մասին օրենսդրության նախատեսված իր իրավունքների և օրինակ շահերի պաշտպանությունը.

երրորդ՝ Բողոքներ քննող անձը չի կարող ըստ էության քննել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, քանի որ եթե Պատվիրատուի արձանագրության և գրության մեջ չեն նշվել Մասնակցին վերագրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը: Բողոքներ քննող անձը պետք է քննության առարկա դարձնի միայն այն հարցը, որ բացակայում է Մասնակցին համապատասխան ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու իրավական հիմքը և այդ հիմքով մերժի Լիազորված մարմնի նախաձեռնած ընթացակարգը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք.

- Մասնակցի մասով մերժել գնումերի գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Մասնակցին ներառելու նպատակով լիազորված մարմնի նախաձեռնած ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգը»:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմություն: Պատվիրատուն Լիազորված մարմնին ուղարկած գրության մեջ նշել է, որ՝ «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել: Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է»:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի[7] 41-րդ կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ «Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը»:

Հիշյալ երկու դրույթներից բխում է, որ՝

1) եթե հայտերի բացման և գնահատման ժամանակ անհամապատասխանություններ են արձանագրվում, ապա պատվիրատուն մասնակցին հնարավորություն է տալիս շտկելու այդ անհամապատասխանությունները.

2) եթե մասնակիցը չի շտկում այն, ապա նրա հայտը գնահատվում է անբավարար.

Այլ խոսքով՝ Կարգի 41-րդ և 42-րդ կետերի շրջանակներում որևէ խոսք չի գնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի[8] 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի մասին:

2. Հարցը, որի վերաբերյալ ներկայացվում է լրացուցիչ դիրքորոշում: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ առաջնորդվենք այն ենթադրությամբ, որ Պատվիրատուն գրության մեջ նկատի է ունեցել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախա-

[7] Այսուհետ՝ Կարգ:
[8] Այսուհետ՝ Օրենք:

տեսված հիմքը, այն է՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, միևնույն է, մեր կարծիքով, նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման:

3. Վեճի առարկան: Գործով վեճի առարկան հանգում է հետևյալին՝ արդյո՞ք գործում առկա փաստական հանգամանքների համատեքստում Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Մասնակիցը սահմանված ժամկետում կատարել է համապատասխան շտկումներ, որոնք, սակայն, Պատվիրատուի կարծիքով համարվել են ոչ ամբողջական:

4. Պարզաբանման ենթակա հարցը: Անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորման պայմաններում ո՞ր դեպքում Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5. Իրավական հիմքերն ու հիմնավորումները: Գործում առկա վեճի առարկայով պայմանավորված՝ Մասնակիցն իր դիրքորոշումը ներկայացնում է երեք տեսանկյունից, որոնց շրջանակներում առաջինը կանվանենք «Մեկնաբանություն 1», երկրորդը՝ «Մեկնաբանություն 2», երրորդը՝ «Մեկնաբանություն 3»:

Մեկնաբանություն 1.

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից [...]»:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի9 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է սույն օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից:

Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

ՔՕ-ի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական օրենսդրությունը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող՝ Հայաստանի Հանրապետու-

թյան Նախագահի հրամանագրերը և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները […] կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, […]»:

Վերոշարադրյալից բխում է, որ՝

ա) գնման հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են.

բ) Օրենքը քաղաքացիական օրենսդրության մաս է կազմում և կոչված է կարգավորելու քաղաքացիաիրավական բնույթի կարգավորիչ և պահպանական գույքային հարաբերություններ.

գ) Օրենքի կարգավորումները, այդ թվում նաև Պատվիրատուի գործողությունները/անգործությունը պետք է մեկնաբանել ՔՕ-ով նախատեսված նորմերի/ինստիտուտների էությանն ու բովանդակությանը համապատասխան:

Ասվածի համատեքստում հարկ է անդրադառնալ այն հարցին, թե գնումների մասին ՀՀ օրենսդրությունն ինչ պահանջներ է նախատեսում Պատվիրատուի կողմից Մասնակցի հայտում առկա անհամապատասխանության արձանագրման և հայտի մերժման մասով:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը»: Այս իրավակարգավորումը մի կողմից նպատակ է հետապնդում բացառել պատվիրատուների կողմից հայտերի կամայական մերժումը, իսկ մյուս կողմից էլ՝ մասնակիցների համար ապահովել որոշակիությունն այն առումով, թե ինչու է նրա հայտը մերժվում: Այլ խոսքով՝ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը և Կարգի 41-րդ կետն ուղղված են ճյուղային օրենսդրության շրջանակներում՝ տվյալ դեպքում գնումների ոլորտում, Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի կենսագործումն ապահովելուն:

Հետևաբար, եթե գնման գործընթացում պատվիրատուն խախտում է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները, ապա այդ հանգամանքը պատվիրատուի համար պետք է առաջացնի բացասական հետևանքներ: Մասնավորապես, եթե պատվիրատուն, չկարողանալով հիմնավորել անհամապատասխանությունը, այնուամենայնիվ, մերժում է մասնակցի հայտը, ապա այն մասնակցի համար այլ հետևանք չպետք է առաջացնի, քան պատվիրատուի կողմից մասնակցի հայտը մերժելն է, եթե մասնակիցն Օրենքով սահմանված կարգով չի ցանկանում բողոքարկել պատվիրատուի գործողությունն առ այն, որ պատվիրատուն չի պահպանել Օրենքի պահանջները: Այլ խոսքով՝ պատվիրատուի կողմից Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջների խախտումը բացառում

[9] Այսուհետ՝ ՔՕ:

է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված հիմքի գոյությունը և ըստ այդմ էլ՝ դրանից բխող Օրենքով նախատեսված բացասական հետևանքի առաջացումը մասնակցի համար:

Հարկ է նկատել, որ պատվիրատուն այս մասով կարող է օգտվել Կարգ 45-րդ կետով (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին) նախատեսված իր սուբյեկտիվ իրավունքից միայն այն դեպքում, երբ նա պահպանել է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները: Այսինքն՝ պատվիրատուի համար նշված սուբյեկտիվ իրավունքի ծագումը պայմանավորված է այն հանգամանքով՝ արդյո՞ք նա պահպանել է գնումների մասին օրենսդրության պահանջները, թե՝ ոչ: Եթե չի պահպանել, ապա Կարգի 45-րդ կետով նախատեսված սուբյեկտիվ իրավունքը նրա մոտ չի ծագել: Այս կերպ մեկնաբանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնումների հետ կապված հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են, որոնց շրջանակներում իրավահարաբերության սուբյեկտների գործողությունները և դրանց արդյունքում առաջացող հետևանքները պետք է մեկնաբանել համարժեքության համատեքստում, ինչն ինքնին բխում է Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքից:

Սույն գործի շրջանակներում գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության 1.2 կետում նշվել է՝

Սարքերի և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)՝

[…]

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին […]: Ըստ վերոնշյալ տեխնիկական անձնագրում առկա հիդրավլիկ կորի՝ տվյալ սարքավորումը չի ապահովում հրավերով պահանջվող H=15 մ ճնշման պարագայում 5 մ3/ժ ջրաքանակ, ավելին՝ ներկայացված պոմպի հոզորությունը՝ առավելագույն ճնշումը, կազմում է H=10 մ, իսկ առավելագույն ջրաքանակը՝ 3 մ3/ժ:

Նշված հարցի առնչությամբ՝ Մասնակիցը պատվիրել է «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ին՝ ուսումնասիրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերին կցված աշխատանքային նախագծերը և տալ եզրակացություն:

2022թ. հունիսի 21-ին տրված եզրակացության համաձայն՝ «Մրցույթում հրապարակված pdf տարբերակի հատակագծում, ինչպես նաև աքսոնոմետրիկ սխեմայում, բացակայում են տաք և սառը ջրագծերի երկարությունները: Ջրագծի երկարությունների բացակայության դեպքում հնարավոր չէ պարզել (հիդրավլիկ հաշվարկում վերոնշյալ դիտարկումները պարտադիր են) պոմպի պարամետրերի ճշգրիտ լինելը:

Հարկ եմ համարում նշել, որ ըստ հրապարակված pdf տարբերակի՝ հատակագծում նշված թաց կետերի քանակը թվով տասն են: Ելնելով (եթե նախագծում տրված հատակագծի համար է արվել հաշվարկը) թաց կետերի քանակից՝ պահանջվող ջրաքանակը կլինի՝

q_{max} = 0,34 լ/վ -0,4 լ/վ,

Որը համարժեք է

q_{max}= 0,37 լ/վ -0,43 մ3/ժ:

Հետևաբար՝ «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից մրցույթում ներկայացված VRS 25/4-130 մոդելի շրջանառության պոմպն ավելի քան բավարար է վերոնշյալ ծավալի ջրի շրջանառությունն իրականացնելու համար[10]»:

Սույն եզրակացությունից բխում է, որ՝

1) ջրագծի երկարությունները բացակայում են, հետևաբար՝ հնարավոր չէ որոշել պոմպի պարամետրերի ճշգրիտ լինելը,

2) ելնելով թաց կետերի քանակից՝ Մասնակցի կողմից մրցույթում ներկայացված VRS 25/4-130 մոդելի շրջանառության պոմպն ավելի քան բավարար է նշված ծավալի ջրի շրջանառությունն իրականացնելու համար:

Այստեղից հետևում է, որ առնվազն այս մասով Պատվիրատուն Մասնակցի հայտը մերժել է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված պահանջի խախտմամբ: Այսինքն՝ հրավերում բացակայել են այն ելակետային դրույթները, որոնցից ելնելով Պատվիրատուն պետք է գնահատեր Մասնակցի կողմից ներկայացրած սարքավորման համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը հրավերի պահանջներին և ըստ այդմ հիմնավորեր հայտի մերժումը:

Հետևաբար՝ Պատվիրատուն կարող է օգտվել Կարգ 45-րդ կետով նախատեսված իր սուբյեկտիվ իրավունքից միայն այն դեպքում, երբ նա պահպանած լիներ Օրենքի 9-րդ հոդ-

[10] Կից ներկայացվում է փորձագիտական եզրակացությունը:

վածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները: Սակայն, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջն պահպանելու համար Պատվիրատուն պետք է հրավերով նախատեսած լիներ ներկայացվող սարքավորման համապատասխանության որոշման համար անհրաժեշտ ելակետային դրույթներ, որոնք, ըստ փորձագետի կողմից տրված եզրակացության, բացակայել են: Այսպիսով՝ այս մասով արդեն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման:

Մեկնաբանություն 2.

Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին»:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»:

Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կառավարությունն իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից»:

Հիշյալ ելակետային դրույթներից և իրավադրույթներից բխում է, որ՝

1) օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը.

2) ենթաօրենսդրական ակտերը պետք է համապատասխանեն օրենքներին.

3) պետական մարմիններն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով.

4) ՀՀ կառավարությունն իրավասու է օրենքով լիազորված լինելու դեպքում ընդունել օրենքի կատարումն ապահովող ենթաօրենսդրական ակտ, իսկ նրա կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտի կարգավորումը չի կարող դուրս գալ առարկայի շրջանակներից, որի [առարկայի] սահմանները նախատեսված են լիազորող օրենքով:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով»:

Հիշյալ ելակետային դրույթներից բխում է, որ՝

1) Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված հիմնական իրավունքները կարող են սահմանափակվել բացառապես օրենքով.

2) օրենքով նախատեսված սահմանափակման հիմքերը և ծավալները պետք է բավարար չափով որոշակի լինեն հենց այդ իրավունքը սահմանափակող օրենքի շրջանակներում: Այսինքն՝ Սահմանադրությունն ուղղակի արգելում է հիմնական իրավունքի սահմանափակման բավարար չափով որոշակիությունն ապահովել ենթաօրենսդրական ակտով.

3) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը Սահմանադրության երկրորդ գլխով նախատեսված հիմնական իրավունքներից է: Հետևաբար՝ այդ իրավունքի սահմանափակման հիմքերն ու ծավալները պետք է բավարար չափով որոշակի լինեն բացառապես օրենքի շրջանակներում, կամ որ նույնն է՝ ենթաօրենսդրական ակտը չի կարող հասցեատիրոջ համար որոշակիացնել Սահմանադրությամբ նախատեսված հիմնական իրավունքի սահմանափակում նախատեսող հիմքը.

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները»:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «[…] մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ»:

Սույն իրավադրույթներից բխում է, որ գնման գործընթացին մասնակցելու և պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու իրավունքը մասնակցի՝ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի բովանդակության տարրերից է, ինչը նշանակում է, որ այդ իրավունքի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված սահմանափակման հիմքերը և ծավալները չեն կարող որոշակիացվել ենթաօրենսդրական ակտի շրջանակներում:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից […]»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի համաձայն՝ «[…] ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ»:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել են գնումների գործընթացում ՀՀ կառավարության լիազորությունները[11]:

---

[11] Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝ 1) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գնումների կատարման կարգը. 2) էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը. 3) էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը. 4) գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման կարգը: Ընդ որում, կարգը նախատեսում է կարգավորումներ նաև պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողության իրականացման հնարավորության ապահովման և դրա կիրառման գործընթացի վերաբերյալ. 5) (կետն ուժը կորցրել է 30.06.21 ՀՕ-285-Ն). 6) սույն օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգը և դրանց առանձնահատկությունները. 7) գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը. 8) հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները. 9) պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը. 10) գնումների համակարգողներին որակավորում շնորհելու և նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստում անցկացնելու կարգը. 11) գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը. 12) սույն օրենքով նախատեսված փոխկապակցված անձանց հասկացությունը և այդ անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը. 13) ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները՝ սույն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից գնահատման կարգը. 14) էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը. 15) փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը. 16) (կետն ուժը կորցրել է 21.01.22 ՀՕ-4-Ն). 17) ըստ գնման ձևերի՝ հրավերով մասնակիցներին ներկայացվող հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման ձևին և չափին ներկայացվող պահանջները. 18) սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ շինարարական աշխատանքների գնման գործընթացի կազմակերպման կարգը: Կարգը պետք է նախատեսի կարգավորումներ գնման գործընթացի մրցակցային և թափանցիկ իրականացման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և*

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման համաձայն՝ «Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 12-րդ, 16-րդ, 17-րդ կետերը և 17-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. 1. Հաստատել՝ 1) գնումների գործընթացի կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի […]»:

Կարգի 1-ին կետի համաձայն՝ «Սույն կարգով կարգավորվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման, գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության, օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգի և դրանց առանձնահատկությունների հետ կապված հարաբերությունները, սահմանվում է «փոխկապակցված անձինք» հասկացությունը, փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները»:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ «Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում»:

Հիշյալ իրավադրույթներից՝ փոխկապակցված Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 153-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, Օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հետ՝ բխում է, որ

1) ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումն ենթաօրենսդրական ակտ է.

2) կառավարությունն Օրենքով չունի և չի էլ կարող ունենալ (ՀՀ Սահմանադրությունն ուղղակի արգելում է) (խոսքը ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման մասին է) լիազորություն՝ ենթաօրենսդրական ակտով սահմանելու՝ ինչ պետք է հասկանալ

նրանց միջև մրցակցության խրախուսման վերաբերյալ. 18) որակավորման ապահովման պայմանի կիրառման դեպքերը. 19) միջազգային պայմանագրերով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին կազմակերպվող գնման գործընթացների առանձնահատկությունները»:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ «խախտել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը» ձևակերպման ներքո: Այդպիսի լիազորությունը Սահմանադրության 79-րդ հոդվածի ուժով վերապահված է բացառապես Ազգային ժողովին: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությունը կառավարությանն արգել է իր կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտի շրջանակներում որոշակիացնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ասվածի շրջանակներում առաջարկում ենք վերադառնալ այն ենթադրությանը, ըստ որի՝ Պատվիրատուն գրության մեջ նկատի է ունեցել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը: Եթե նույնիսկ նկատի է ունեցել, ապա միևնույն է, Օրենքում բացակայում է այդ հիմքի որոշակիությունը: Այսինքն՝ Օրենքը չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչ ենք հասկանում գնման գործընթացում ստանձած պարտավորության խախտում ասելով, որով կսահմանափակվի Մասնակցի՝ հետագա գնումներին մասնակցելու իրավունքը, իսկ կառավարությունը, ինչպես տեսանք, Սահմանադրության ուժով այդպիսի որոշակիություն ապահովելու իրավազորություն չունի:

Հետևաբար՝ այն հանգամանքը, որ Պատվիրատուն Լիազորված մարմնին ուղարկած գրության մեջ հղում է կատարել Կարգի 41-րդ կետին և նշել, որ Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել, ամենևին էլ չի նշանակում, որ առկա է Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձած պարտավորության խախտում:

Սակայն այս դեպքում վեճը քննող մարմնի մոտ հետևյալ իրավաչափ հարցն է ծագելու՝ եթե Սահմանաադրությունը կառավարությանն արգելել է ենթաօրենսդրական ակտի շրջանակներում որոշակիացնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը, իսկ Կարգի 32-րդ կետի 19-րդ կետով այնուամենայնիվ նախատեսված է, որ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, այդ դեպքում, ինչպես պետք է հանգուցալուծվի վեճը:

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն […] իրավական պետություն է»:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»:

Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

Վկայակոչված դրույթներից բխում է, որ սույն գործով Մասնակցի նկատմամբ հավասարապես տարածվում են Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմնական իրավունքը և 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքը, իսկ վեճը լուծող մարմինը պետք է առաջնորդվի Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածներով նախատեսված սահմանադրական կարգի հիմունքներով: Այլ կերպ ասած՝ Սահմանադրության 1-ին հոդվածի ուժով՝ ՀՀ իրավական համակարգում գործում է ընդունված կարգավորումների՝ Սահմանադրությանը համապատասխանելու կանխավարկածը: Սակայն եթե վեճը քննող մարմինը հղում կատարի Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետին և որոշի, որ առկա է Մասնակցին համապատասխան ցուցակում ներառելու հիմք, ապա այդ դեպքում նրա կայացրած որոշումը կհասկասի Սահմանադրության 1-ին հոդվածին և 3-րդ հոդվածի 2-րդ մասին:

Հետևաբար, վեճը լուծող մարմինն այս իրավիրճակից դուրս գալու համար պետք է հիմք ընդունի Սահմանադրության 1-ին հոդվածը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը և դրացից բխող իրավական կարգավորման՝ Սահմանադրությանը համապատասխանելու իրավական կանխավարկածը, Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 59-րդ հոդվածի 1-ին մասը, 79-րդ հոդվածը, 153-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը և Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը մեկնաբանի contra legem կանոնով, այն է՝ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը չի կարող որոշակիացնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նապատեսված հիմքը, որպեսզի Մասնակցի՝ Հ Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքի շրջանակներում ապահովվի Սահմանադրության 1-ին հոդվածով և 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանադրական կարգի հիմունքների իրացումը: Հակառակ դեպքում, եթե հրաժավենք contra legem մեկնաբանման կանոնից, ապա կնշանակի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումները ստորադասում ենք Կարգի 32-րդ

կետի 1-րդ ենթակետով նախատեսված կարգավորումից, ինչն ինքնին հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքին:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Սահմանադրության 1-ին հոդվածը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 59-րդ հոդվածի 1-ին մասը, 79-րդ հոդվածը, 153-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում ենք, որ Մասնակիցը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ Օրենքում Մասնակցի համար բավարար չափով որոշակի չէ «խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը» ձևակերպումը, իսկ ՀՀ կառավարությունը ենթաօրենսդրական ակտի շրջանակներում այդպիսի որոշակիություն ապահովելու իրավազորություն չունի, քանի որ դա արգելված է Սահմանադրությամբ:

Մեկնաբանություն 3.

Վերոգրյալի ներքո ստորև ցանկանում ենք քննարկան առարկա դարձնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը բացառապես Օրենքի կարգավորումների շրջանակներում այն տրամաբանությամբ, որ ենթաօրենսդրական ակտով այդ հիմքի բավարար չափով որոշակիություն չի կարող ապահովվել:

Ինչպես արդեն նշվեց, Օրենքի շրջանակներում առաջացող գնման հարաբերությունները քաղաքացիաիրավական բնույթի պարտավորական հարաբերություններ են և դրանք պետք է մեկնաբանել ՔՕ-ով նախատեսված նորմերի/ինստիտուտների էությանն ու բովանդակությանը համապատասխան:

ՔՕ-ի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Սույն հոդվածից բխում է, որ պարտավորության ուժով կողմերի միջև ծագում են կարգավորիչ և պաշտպանական պարտավորական հարաբերություններ: Ընդ որում՝ պաշտպանական պարտավորությունը ծագում են միայն այն դեպքում, երբ կողմերի միջև ծագած կլինեն կարգավորիչ պարտավորական հարաբերություններ: Այլ խոսքով՝ պաշտպանական պարտավորությունից բխող հետևանքները կարող են վրա հասնել միայն այն դեպքում, երբ

կողմերի միջև ծագած կարգավորիչ հարաբերությունները կողմերից մեկի կողմից խախտվել են:

Հետևաբար՝ այս համատեքստում պետք է քննարկման առարկա դարձնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում կիրառված «ստանձնած պարտավորություն» ձևակերպումը, որից պետք է տարանջատել հրավերով պահանջվող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունից: Այսինքն՝ մասնակցի կողմից Օրենքի ուժով որևէ փաստաթուղթ ներկայացնելու պարտականությունը չպետք է նույնացնել Օրենքի ուժով ստանձնող պարտավորության հետ: Մասնակցի կողմից առաջինը կատարելը հիմք է մասնակցի հայտը բավարար գնահատելու համար, իսկ Մասնակցի կողմից պարտավորությունը չկատարելը հիմքը է պատվիրատուի և մասնակցի միջև ծագած կարգավորիչ պարտավորության խախտման փաստով մասնակցի նկատմամբ հետևանք կիրառելու համար: Ուստի՝ խնդրի էության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով պայմանավորված՝ պետք է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե երբ է պատվիրատուի և մասնակից միջև ծագում պարտավորական հարաբերություն, իսկ որ դեպքում՝ պարտականություն, որի ոչ պաշտաճ կատարումը հիմք է միայն մասնակցի հայտն անբավարար գնահատելու համար:

Օրենքի համակարգային դիտարկումը ցույց է տալիս, որ օրենսդիրը նախատեսել է երկու կանոն: Առաջին կանոնը վերաբերում է մասնակցի կողմից փաստաթուղթ ներկայացնելու պարտականությանը, որի կատարման դեպքում հայտը կգնահատվի բավարար, իսկ երկրորդ կանոնը վերաբերում է մասնակցի կողմից ստանձնած պարտավորությանը, որի խախտման դեպքում վերջինս կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե մենք հրաժարվենք այս երկու կանոնները տարանջատելուց, ապա անհիմն կերպով մասնակցի յուրաքանչյուր գործողություն դիտարկելու ենք որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, որն էլ իր հերթին առաջացնելու է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված, իսկ առանձին դեպքերում նաև Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հետևանքները: Մինչդեռ օրենսդիրն Օրենքի շրջանակներում առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ մասնակցի նկատմամբ բացասական՝ այդ թվում գույքային հետևանքներ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ նրա գործողության կամ անգործության արդյունքում խախտվում են պատվիրատուի իրավունքներն ու օրինական շահերը, այսինքն՝ պետք է առկա լինեն կարգավորիչ պարտավորական հարաբերություններ:

Օրենսդրի այդ տրամաբանությունն արտահայտվել է Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներում: Մասնավորապես, օրենսդիրը, ելնելով որոշակի նպատակներից, իրավական սկզբունքներից և ակնկալվող արդյունքներից, նորմատիվ իրավական ակտերի միջոցով հասարակական հարաբերությունների կանոնակարգումն իրականացնում է անհատի ու հասարակության տեսանկյունից: Բնականաբար, այս առումով բացառություն չէ նաև Օրենքի՝ որպես նորմատիվ իրավական ակտի գոյությունը: Ընդ որում՝ Օրենքի կարգավորումների էությունը և բովանդակությունը պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող կարգավորիչ պարտավորական հարաբերությունների էությանն ու տրամաբանությանը՝ այդ թվում նաև պարտավորական իրավունքից բխող պատասխանատվության մասով:

Այս գաղափարի հիման վրա էլ Օրենքի 3-րդ հոդվածում նախատեսվել են Օրենքի նպատակը, գնումների և գնումների գործընթացի սկզբունքները: Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշվում է, որ գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի վրա: Սա նշանակում է, որ Օրենքի շրջանակներում առկա մյուս բոլոր իրավական կառուցակարգերը/կարգավորումները՝ այդ թվում մասնակիցների համար առաջացող բացասական հետևանքները պետք է կառուցվեն այս և հիշատակված հոդվածում առկա մյուս սկզբունքների հիման վրա:

Ինչու՞: Այն պարզ պատճառով, որ եթե մասնակցի ցանկացած գործողություն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով մեկնաբանվի որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, որի դեպքում վրա կհասնեն Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևանքը, ապա կնշանակի, որ գնումների գործընթացը հիմնվում է ոչ թե պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, այլ ընդհակառակը՝ մասնակիցների շրջանակի սահմանափակման և նրանց միջև մրցակցության չխրախուսման սկզբունքի վրա, իսկ Օրենքի նպատակն էլ կդառնա մասնակիցներին պատասխանատվության ենթարկելը: Այսինքն՝ այն կվերածվի վարչաիրավական հարաբերության: Մինչդեռ, քաղաքացիական օրենսդրությունը (գնումների գործընթացում առաջացող իրավահարաբերությունները մաքուր քաղաքացիաիրավական հարաբերություններ են) ուղղված է առաջին հերթին տնտեսական շրջանառության դինամիկայի ապահովմանը, իսկ քաղաքացիաիրավական առումով սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելը վրա է հասնում միայն այն դեպքում, երբ նրանց գործողությունները խոչընդոտում են

տնտեսական շրջանառության դինամիկ զարգացմանը՝ այսինքն խախտում են պատվիրատուի իրավունքներն ու օրինական շահերը:

Եթե ասվածի լույսի ներքո Օրենքի շրջանակներում «հետախուզում» հայտարարենք «խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը» ձևակերպման նկատմամբ, ապա կարծանագրենք, որ օրենսդիրն այս ձևակերպումն օգտագործել է ընդամենը երկու անգամ, այն է՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում և 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում: Հետևաբար՝ որպեսզի կարողանանք Օրենքի շրջանակներում պարտականությունը տարանջատել պարտավորությունից, անհրաժեշտ է վեր հանել միայն այն դեպքերը, երբ Օրենքի ուժով մասնակիցը պատվիրատուի առջև ստանձնում է պարտավորություն: Ընդ որում՝ այդ դեպքերը պետք է սպառիչ լինեն, քանի որ սպառիչ են նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը:

Հարցի պատասխանը ստանալու համար ելակետային կարգավորումը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, ըստ որի՝ «Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները»:

Հիշյալ կարգավորումից հետևում է, որ Օրենքի իմաստով «գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտման» դեպքերից մեկը վերաբերում է որակավորման համար պահանջվող փաստաթղթերին (որակավորման չափանիշները նախատեսված են Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով):

Որակավորման համար պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասնակցի պարտականությունը բխում է Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված կարգավորումից, ըստ որի՝ «Հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)»:

Այս կարգավորումը գործում էր մինչև 2019թ. նոյեմբերի 2-ը: Սակայն, 2019թ. նոյեմբերի 2-ին ուժի մեջ մտավ 2019թ. հոկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրա-

պետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 1422 որոշումը, որով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգում կատարվեցին մի շարք փոփոխություններ և լրացումներ: Ի լրումն այդ փոփոխությունների և լրացումների՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» ենթակետով նախատեսվեց որակավորման ապահովման ինստիտուտը և այդ պահից սկսած՝ իրավակիրառ պրակտիկան ընթանում է այն ուղղությամբ, որ պատվիրատուն հրավերով այլևս որակավորման չափանիշների և համապատասխան փաստաթղթերի ներկայացման պահանջ չի կարող նախատեսել: Հետևաբար՝ այս փոփոխություններից հետո Օրենքի իմաստով արդեն որակավորման ապահովում չներկայացնելը դիտարկվում է որպես մասնակցի կողմից ստանձնած պարտավորության խախտում, որը հիմք է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ասվածն ուղղակիորեն բխում է Կարգով նախատեսված կարգավորումներից: Մասնավորապես, Կարգի 59-րդ կետով հստակ սահմանվում է, որ՝ «Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ 1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին. 2) բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել»: Եթե ավելի պարզ, ապա այս կարգավորմամբ հստակ ասվում է, որ որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում, մասնակցից այլևս, օրինակ, տեխնիկական միջոցների կամ աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի կարող պահանջվել:

Կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում Կարգի 32-րդ կետի 19-րդ կետը շարադրվեց հետևյալ կերպ՝ «Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և

ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»: Հարց է առաջանում՝ որակավորման ապահովումից բացի Օրենքի իմաստով էլ ո՞ր փաստաթղթերի չտրամադրումն է համարվում գնման գործընթացում մասնակցի կողից ստանձնած պարտավորության խախտում: Իսկ ինչու՞ Օրենքի իմաստով:

Առաջին՝ այն պատճառով, որ Կարգում թվարկվում է, թե մասնակիցը հայտով ինչ է ներկայացնում, սակայն որևէ տեղ չի բացահայտում, թե մասնակիցի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում որ փաստաթղթերի չներկայացնումն է համարվում ստանձնած պարտավորության խախտում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով՝ բացառությամբ որակավորման ապահովման, որը Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է որպես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորության խախտում:

Երկրորդ՝ եթե մենք փորձենք այս հարցի պատասխանը ստանալ Կարգի միջոցով, ապա խնդիր ենք ունենալու ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի հետ: Բացի այդ, չենք կարողանալու տարանջատել, թե որ դեպքում է մասնակցի հայտն անբավարար գնահատվում և մերժվում, որի հետևանքը լինում է նրան համապատասխան ցուցակում ներառելը, և որ դեպքում է պարզապես մասնակցի հայտն անբավարար գնահատվում և մերժվում:

Երրորդ՝ եթե մասնակցի ցանկացած գործողություն որակվի որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում՝ ապա այդպիսի մեկնաբանությունը կհակասի պարտավորական հարաբերությունների էությանը և Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված նպատակին և սկզբունքին (պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում):

Այս դատողություններն առավել ակնհայտ են դառնում, երբ խնդիրը դիտարկում ենք Օրենքի շրջանակներում: Մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետն ունի հետևյալ բովանդակությունը՝ «[…] խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

Այստեղից բխում է, որ մասնակցի համար պարտավորությունը ծագում է (1) պատվիրատուի հետ կնքած պայմանագրով և (2) գնման գործընթացի շրջանակներում՝ նախքան

պայմանագրի կնքումը: Օրենքի իմաստով՝ վերջինի դրսևորումը հետևյալն է՝ մասնակիցը ստանձնում է պարտավորություն՝ կրել պայմանագրի ապահովումը (փաստաթուղթը) ներկայացնելու պարտականություն: Այսինքն՝ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով փաստաթուղթ է համարվում պայմանագրի ապահովումը, որակավորման ապահովումը և Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որոնք մասնակիցը պետք է ներկայացնի նախքան պայմանագիրը կնքելը, որոնց ներկայացման պարտականության համար Օրենքով արդեն ստանձնել է պարտավորություն և որոնց չներկայացումը կհանգեցնի պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի խախտմանը:

Եթե հրաժարվենք այս մեկնաբանությունից և մասնակցի կողմից ցանկացած անհամապատասխանությունն ամբողջությամբ չշտկելն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով դիտարկենք որպես գնման գործընթացում նրա կողմից ստանձնած պարտավորության խախտում, ապա ուղղակիորեն խնդիր ենք ունենալու ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության և 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքների հետ:

Մասնավորապես, կստացվի՝ գնային առաջարկ չներկայացնելու դեպքում հայտն ընդամենը մերժվում է և չի համարվում որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, իսկ անհամապատասխանությունը չշտկելը որակվում է որպես պարտավորության խախտում, և վրա է հասնում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածով նախատեսված հետևանքները: Եթե այդպես է, ապա գնային առաջարկ չներկայացնելը կամ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելը ևս պետք է համարվեր ստանձնած պարտավորության խախտում: Մինչդեռ, այդպես չէ, քանի որ գնային առաջարկ ներկայացնելը չի համարվում ստանձնած պարտավորություն: Գնային առաջարկ ներկայացնելը կամ որոշ դեպքերում անհամապատասխանությունները շտկելն ընդամենն այն պայմաններն են, որոնց պահպանման դեպքում հայտը կգնահատվի բավարար: Այսինքն՝ հայտը բավարար գնահատելու համար Օրենքով սահմանված պայմանները և գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները չպետք է նույնացվեն միմյանց հետ. դրանք բոլորովին տարբեր իրավական կատեգորիաներ են:

Ավելին՝ այս դեպքում հաջորդ հարցն է առաջանալու՝ որտեղ մնաց պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը և Օրենքի նպատակը: Պատկերացնենք նախահաշվային գինը 3 000 000 000 ՀՀ դրամ է: Ո՞վ կմասնակցի, եթե իմանա, որ սխալ շտկելու դեպքում իր

նկատմամբ կիրառվելու է Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևանքը: Եթե ցանկացած անհամապատասխանության չշտկումը կամ ոչ ամբողջական շտկումը դիտվի որպես ստանձնած պարտավորության խախտում, ապա կստացվի, որ օրենսդրի նպատակն է յուրաքանչյուր գնման գործընթացի շրջանակներում «նպաստել» նոր իրավաբանական անձանց հիմնադրմանը, քանի որ որոշները հայտնվել են համապատասխան ցուցակում երկու տարի ժամկետով:

Իսկ եթե շարժվենք մեր կողմից տրված մեկնաբանությամբ՝ նրա հիմքում համաչափության և որոշակիության սկզբունքը դնելով որպես մեկնաբանմանն ուղղորդող ելակետային դրույթներ, ապա կատարելու ենք դատողություն առ այն, որ բացառությամբ վերը նշված դեպքերի՝ մյուս անհամապատասխանություններն ամբողջական չշտկելը չի համարվում որպես ստանձնած պարտավորության խախտում, քանի որ մասնակցի և պատվիրատուի միջև դեռևս չկա ծագած պարտավորություն, որի բովանդակության տարրերից մեկն էլ կկազմեր անհամապատասխանությունները շտկելը:

Հետևաբար, եթե սույն վեճի առարկայի շրջանակներում Օրենքով նախատեսված կարգավորումներին մոտենում ենք վերոշարադրյալ գաղափարների լույսի ներքո, ապա Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ «խախտել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը» կարգավորման վերաբերյալ կստանանք հետևյալ պատկերը՝ Օրենքի իմաստով ստանձնած պարտավորության խախտում կարող են համարվել Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում պայմանագրի ապահովում չներկայացնելը, Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն որակավորման ապահովում չներկայացնելը և Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը: Այլ կերպ ասած՝ սրանք այն դեպքերն են, որոնց համար մասնակիցը ստանձնում է պարտավորություն, այն է՝ անհրաժեշտության դեպքում կրում է այդ փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելու պարտականություն, որը կազմում է նրա և պատվիրատուի միջև Օրենքով ծագած պարտավորության բովանդակությունը:

Սույն գործով առկա փաստերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 24-ի N 2-3 արձանագրության 1.2 կետում նշվել է՝ «[…] ծանուցել «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 25.05.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները […]»: Մասնակիցը նախատեսված ժամկետում կատարել է համապատասխան շտկումները և սահմանված կարգով ներկայացրել գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովի՝ 2022թ. մայիսի 26-ի N 2-4 արձանագրության 1.2 կետում նշվել է՝ որ 1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Այստեղ է այն հարցն առաջանում՝ արդյո՞ք Մասնակիցն թույլ է տվել ստանձնած պարտավորության խախտում, եթե նա կատարել է շտկում, որը, սակայն, Պատվիրատուի կարծիքով դարձյալ չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիական պահանջներին:

Վերոշարադրյալ իրավանորմներից և վերլուծություններից հետևում է, որ սույն գործով Մասնակիցը կհարմարվեր գնման գործընթացում ստանձնած պարտավորությունը խախտած, եթե նա Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում Պատվիրատուին չներկայացներ պայմանագրի ապահովում կա՛մ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն որակավորման ապահովումը, կա՛մ Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը: Մինչդեռ սույն գործով նշված երեք դեպքերն էլ բացակայում են:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Մասնակցի կողմից կատարված շտկումը Պատվիրատուի կարծիքով չի համապատասխանում տեխնիկական պահանջներին, ապա այդ փաստը, ինչպես արդեն նշվեց, Օրենքի իմաստով չի կարող համարվել ստանձնած պարտավորութունների խախտում: Եթե նույնիսկ անտեսենք Սահմանադրության 79-րդ հոդվածի կարգավորումը՝ փոխկապակցված Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 79-րդ հոդվածի, 153-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի հետ և պնդենք որ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով կարող է որոշակիացվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, ապա այդ դեպքում պետք է առաջնորդվել նույն Մասնակցի վերաբերյալ նմանատիպ փաստական հանգամանքներով քննված և կայացված թիվ ՍՑ-ԼՕ-2022/93 և ՍՑ-ԼՕ-2022/77 որոշումներում բողոքներում քննող անձի կողմից արտահայտված իրավական հիմնավորումներով, որոնցում հստակ նշվել է՝ «Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ

անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի այն դեպքում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսինքն՝ եթե առաջնորդվենք բողոքներ քննող անձի վերը նշված հիմնավորումներով, ապա կստացվի, որ սույն գործով Մասնակիցն իր պարտավորությունը կատարել է ոչ պատշաճ, սակայն չի կարող կրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը, քանի որ Մասնակցի գործողություններում մեղքը բացակայել է, այն է՝ սահմանված ժամկետում կատարել է պահանջված շտկումը, սակայն այդ շտկումը, ըստ Պատվիրատուի, չի համապատասխանել (շտկումը ոչ պատշաճ է կատարվել) հրավերի պահանջներին:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը և 2022թ. հունիսի 2-ին ներկայացրած № Է-10/22 դիրքորոշումը՝ խնդրում ենք Մասնակցի մասով մերժել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Մասնակցին ներառելու նպատակով լիազորված մարմնի նախաձեռնած ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգը:

«ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.05.2022թ. թիվ 02/16.4/5530-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022 թվականի մարտի 18-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/2 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի և ՀՀ Արագածոտնի մարզի «Ալագյազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին

մասնակցության հայտ է ներկայացրել «Էնջինիրինգ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/217 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-22/2» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման համար 1-ին տողով սահմանվել է հետևյալը.

Հավելված N 1.2
ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-22/2 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

*ՆԿԱՐԱԳԻՐ**

սարքերի և սարքավորումների

_____-ն ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/2

ծածկագրով բաց մրցույթի շրջանակում

մասնակցի անվանումը

ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ և տեխնիկական բնութագրեր	Չ.մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել	Առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում, կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար/ ****
1	2	3	4	5	6	7	8	9
Ջեռուցում								
1	Շրջանառու պոմպ TOP-S 30/15 N=390վտ. G=5մ3/ժ, H=15մ կամ համարժեք	հատ	1	1 տարի				

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ն:

4. «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով՝ 1-ին տողով ներկայացվել է հետևյալը.

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ և տեխնիկական բնութագրեր	Չ.մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել	Առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում, կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար/ ****
1	2	3	4	5	6	7	8	9
Ջեռուցում								
1	Շրջանառու պոմպ TOP-S	հատ	1	1 տարի	1 տար ի	valtec	VRS 25/4-130	https:/valtec.ru/catalog/nasosnoe_oborudovanie

	30/15 N=390վտ. G=5մ3/ժ, H=15մ կամ համարժեք							/nasosy_cirkulyacionnye/nasos_cirkulyacionnyj_vrs_254_130.html

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի մասով արձանագրել է հետևյալը.

Ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը:

Սարքեր և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ըստ մասնակցի կողմից ներկայացված CPSTEN50Hz տեխնիկական անձնագրում առկա հիդրավլիկ կորի՝ հրավերով պահանջվող H=15m ճնշման դեպքում նշված մոդելը չի ապահովում Q=5մ^3/ժ ջրաքանակ, այլ ապահովում է 4մ^3/ժ (65լ/ր) ջրաքանակ:...

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (25.05.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 24.05.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից շտկվել են թերի, մասնավորապես՝

Սարքեր և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնակիցը շտկումով ներկայացրել է https:/valtec.ru/catalog/nasosnoe_oborudovanie/nasosy_cirkulyacionnye/nasos_ cirkulyacionnyj_vrs_254_130.html հղումը, որտեղ առկա է «Паспорт: Насосы циркуляционные ц мокрым ротором» տեխնիկական անձնագիրը: Ըստ վերոնշյալ տեխնիկական անձնագրում առկա հիդրավլիկ կլորի՝ տվյալ սարքավորումը չի ապահովում հրավերով պահանջվող H=15m ճնշման դեպքում 5մ³/ժ ջրաքանակ, ավելին՝ ներկայացված պոմպի հզորությունը՝ առավելագույն ճնշումը, կազում է H=10m, իսկ առավելագույն ջրաքանակը՝ 3մ³/ժ:

9. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատողը որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

10. Ընկերության կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացվել է «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի (լիցենզիա՝ տրված 30.03.2021թ. անժամկետ /ՔՊԼ 17976/ գործունեության տեսակը՝ *քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում*, գործունեության ոլորտը՝ *բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր*) կողմից տրված 21.06.2022թ. եզրակացությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9985-2022 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 30.05.2022թ. թիվ 02/16.4/5530-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումները և «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից տրված 21.06.2022թ. եզրակացությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:*** Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և ***գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են <u>անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված

փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/2» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման համար 1-ին տողով սահմանվել է հետևյալը.

Հավելված N 1.2
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/2 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

*ՆԿԱՐԱԳԻՐ**

սարքերի և սարքավորումների

_____-ն ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/2

ծածկագրով բաց մրցույթի շրջանակում

մասնակցի անվանումը

ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ և տեխնիկական բնութագրեր	Չ.մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել	Առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում, կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար/ ****
1	2	3	4	5	6	7	8	9
Ջեռուցում								
1	Շրջանառու պոմպ TOP-S 30/15 N=390վտ. G=5մ3/ժ, H=15մ կամ համարժեք	հատ	1	1 տարի				

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ն:

«ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով՝ 1-ին տողով ներկայացվել է հետևյալը.

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ և տեխնիկական բնութագրեր	Չ.մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել	Առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում, կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար/ ****
1	2	3	4	5	6	7	8	9
Ջեռուցում								
1	Շրջանառու պոմպ TOP-S 30/15 N=390վտ. G=5մ3/ժ, H=15մ կամ համարժեք	հատ	1	1 տարի	1 տար ի	valtec	VRS 25/4-130	https:/valtec.ru/catalog/nasosnoe_oborudovanie/nasosy_cirkulyacionnye/nasos_cirkulyacionnyj_vrs_254_130.html

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ն մասով արձանագրել է հետևյալը.

Ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը:

Սարքեր և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ըստ մասնակցի կողմից ներկայացված CPSTEN50Hz տեխնիկական անձնագրում առկա հիդրավլիկ կորի՝ հրավերով պահանջվող H=15m ճնշման դեպքում նշված մոդելը չի ապահովում Q=5մ^3/ժ ջրաքանակ, այլ ապահովում է 4մ^3/ժ (65լ/ր) ջրաքանակ:...

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (25.05.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 24.05.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից շտկվել են թերի, մասնավորապես՝

Սարքեր և սարքավորումների նկարագրի վերաբերյալ (Հավելված 1.2)

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

1-ին տողով ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնակիցը շտկումով ներկայացրել է https:/valtec.ru/catalog/nasosnoe_oborudovanie/nasosy_cirkulyacionnye/nasos_ cirkulyacionnyj_vrs_254_130.html հղումը, որտեղ առկա է «Паспорт: Насосы циркуляционные ц мокрым ротором» տեխնիկական անձնագիրը: Ըստ վերոնշյալ տեխնիկական անձնագրում առկա հիդրավլիկ կլորի՝ տվյալ

սարքավորումը չի ապահովում հրավերով պահանջվող H=15m ճնշման դեպքում 5մ³/ժ ջրաքանակ, ավելին՝ ներկայացված պոմպի հզորությունը՝ առավելագույն ճնշումը, կազում է H=10m, իսկ առավելագույն ջրաքանակը՝ 3մ³/ժ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատողը որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտի մերժման հիմքին՝ հայտնում եմ հետևյալը.

Ընկերության կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացվել է «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի (լիցենզիա՝ տրված 30.03.2021թ. անժամկետ /ՔՊԼ 17976/ գործունեության տեսակը՝ *քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում*, գործունեության ոլորտը՝ *բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր*) կողմից տրված 21.06.2022թ. եզրակացությունը, հետևյալ բովանդակությամբ.

««ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի պատվերով՝ ի դեմս գլխավոր տնօրեն Վահե Պետրոսյանի, «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն ուսումնասիրել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022թ. մարտի 18-ին ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-22/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերին կցված աշխատանքային նախագծերը:

Նախագծով սարքավորումների ընտրությունը կատարվում է նախագծում ջրագծի տրամագծի և երկարության առկայությամբ:

Մրցույթում հրապարակված pdf տարբերակի հատակագծում, ինչպես նաև աքսոնոմետրիկ սխեմայում, բացակայում են տաք (և սառը ջրագծերի երկարությունները: Ջրագծի երկարությունների բացակայության դեպքում հնարավոր չէ պարզել (հիդրավլիկ հաշվարկում վերոնշյալ դիտարկումներ պարտադիր են) պոմպի պարամետրերի ճշգրիտ լինելը:

Հարկ եմ համարում նշել, որ ըստ հրապարակված pdf տարբերակի՝ հատակագծում նշված թաց կետերի քանակը թվով տասն են: Ելնելով (եթե նախագծում տրված հատակագծի համար է արվել հաշվարկը) թաց կետերի քանակից՝ պահանջվող ջրաքանակը կլինի՝

q_{max} = 0,34 լ/վ -0,4 լ/վ,

Որը համարժեք է

q_{max} = 0,37 լ/վ -0,43 մ^3/ժ:

Հետևաբար՝ «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից մրցույթում ներկայացված VRS 25/4-130 մոդելի շրջանառության պոմպն ավելի քան բավարար է վերոնշյալ ծավալի ջրի շրջանառությունն իրականացնելու համար»:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքի ուժով՝ արձանագրում եմ, Ընկերության հայտը՝ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով շտկման պահանջ ներկայացնելով և արդյունքում մերժելով՝ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, հետևաբար գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանն, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9985-2022 գրությամբ «ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**